



«ԱՍՊԵՆՂԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 1649-Լ

«05» դեկտեմբերի 2024 թ.  
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆՂԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 528-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 5-րդ հոդվածի և 84-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 137-րդ հոդվածի, 139-րդ հոդվածի, 142-րդ հոդվածի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի և 26-րդ կետերի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Թատրոնի տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1408-Լ հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը՝

**հրամայում եմ.**

1. Թատրոնի տնօրենի 2024 թվականի ապրիլի 29-ի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքային ռեժիմը սահմանելու մասին» N 528-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2) Թատրոնի տնօրենի անվտանգության գծով խորհրդականի, անձնակազմի կառավարման բաժնի մուտքի անցակետի հսկիչների, հաշվապահական հաշվառման բաժնի տոմսարկղի գանձապահների և տոմսերի առցանց վաճառքի մասնագետի, երկարաժամկետ պլանավորման բաժնի սոցիալական մեդիայի առաջխաղացման մասնագետի, գործերի կառավարչության, հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնի նկարիչ-ձևավորողի, ֆոտովիդեո օպերատոր և մոնտաժողի, լուսանկարչի, հանդիսատեսի ավագ օգնականի, հանդիսատեսի օգնականների և հանդերձապահի, գեղարվեստաստեղծագործական ստորաբաժանման գեղարվեստական ղեկավարի խորհրդականի, երիտասարդական օպերային ծրագրի ղեկավարի, մանկական երաժշտական ներկայացումների ղեկավարի, երիտասարդական օպերային ծրագրի

կոնցերտմայստերի, օպերային թատերախմբի, նվագախմբի, բալետային խմբի, երգչախմբի, ռեժիսորական ղեկավարման մասի, միմանսի, գրադարանի, բեմադրական մասի, բեմադրական ղեկորատիվ բաժնի, բեմի մեքենավարների ծառայության, թատերական լուսավորության ծառայության, տեսապրոեկցիոն ծառայության, ձայնահնչունային ծառայության, բեմական հանդերձանքի և ռեկվիզիտի ստորաբաժանման ղեկավարի, ներկայացումների անձնագրեր պատրաստող մասնագետի, ռեկվիզիտի ծառայության, բեմական զգեստների հանդերձարանի, կոշիկի և գլխարկի հանդերձարանի, գրիմի ծառայության, ինժեներատեխնիկական ստորաբաժանման գլխավոր ճարտարագետի, բեմական մեխանիզմների համակարգի սպասարկման ծառայության, օդափոխության, օդորակման և ջերմամատակարարման ծառայության, կապի ծառայության, սանտեխնիկական ծառայության, վերելակային ծառայության, էլեկտրատեխնիկական ծառայության, հակահրդեհային ծառայության պետի և քաղաքաշտպանության բնագավառի ծառայողի, ջեռուցման համակարգի սպասարկման ծառայության պետի, ճարտարագետի և փականագործների համար սահմանել շաբաթական վեցօրյա աշխատանքային ռեժիմ, հանգստյան օրը՝ երկուշաբթի:»:

2. Հանձնարարել Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ սույն հրամանի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Թատրոնի բոլոր աշխատողներին:

3. Հանձնարարել Թատրոնի տոմսերի առցանց վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը մեկօրյա ժամկետում հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում և փակցնել Թատրոնի ծառայողական մուտքի մոտ տեղադրված հայտարարությունների տախտակին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Թատրոնի տնօրենի  
լիազորություններն իրականացնող՝



Կ. Կիրակոսյան

ք. Երևան  
«05» դեկտեմբերի 2024 թ.